ւորութեանս Մերոյ Իրանի ուղղեալ ընդ միշտ՝ ի նկատի ունիցին զպատիւ Նորին Գերապատուութեան, որպէս և խնդրուածոց նորին տացեն հնարաւորութիւն։ Եւ քանզի խղճք Մեր անդստին ի նախահարց Մերոց ցայսօր եղեալ է, զի բովանդակ հպատակք՝ առանց իրիք խտրութեան, որք ընդ Մերովս Բարձր Թագաւորութեամբ Իրանի, կացցեն և մնասցեն ի բարօրութեան, այնպէս և Հայ ժողովուրդն՝ որ ի հնուց անտի ժամանակաց վայելեալ է զսէր և զշնորհս Նախնեաց Մերոց, համոզիք զի յամենայն կողմանց լինիցի յապահովութեան, յազատութեան, անձնատուր եղիցին գործոց իւրեանց և վաստակոց։ Բարեմաղթեմք առ Աստուած զի Դուք ևս հանդոյն Նախորդաց Ձերոց ընթանայցէք ի նոյն շաւիղ, և հոգևոր հովիւք Իրանի՝ որք գտանին ընդ Ձերով իշխանութեամբ, կացցեն՝ ի Ձէնջ հրամայեալ՝ ի նոյն հրահանգս և պատուիրանս և ի նկատի ունիցին զօգուտ ազգի և կառավարութեան Մերոյ։

Եւ մեք և մնամք բաղձացողք քաջառողջութեան Ձերդ Սրբութեան և խնդրեմք վերառաքել զպատեհանդն աղօթս վասն Մեր ի Սրբավայրն Էջմիածնի։

Յամսեանն շապան յամի 1311 ի քառասներորդ յեօթներորդ ամի Թագաւորութեան Մերոյ։

---

Թարգմանութիւն Թղթոյ մեծի Նախարարին Պետութեան Պարսից։

Ընկալեալ է մեր յանկեղծութենէ բղխեալ գիրութիւն Ձերումդ յարգապանծ, առաքինազարդ և հռչակելի Վեհափառութեան՝ որ զատակից էք հրեշտակաց, և զյարգական և պատկառելի գրութիւնն առ փառապանծ, նուիրական և թագակիր Թագաւորն ամենայն Իրանի—յաւերժացուցէ Տէր յամս յաւէտ զԹագաւորութիւն Նորա — զոր հասուցեք ի ձեռն Նորին Բարձր Մեծութեան, ըստ ցանկութեան Ձերումդ Վեհափառութեան, յորում առաջարկեալ էք ի Ձէնջ ընտրեալ զԳեր. Սուքիաս Արքեպիսկոպոսն յառաջնորդութիւն Ատրպատականի վիճակին բովանդակ Հայոց։ Առ այս բանք Ձեր յոյժ հաճոյ գտան առաջի Շահնշահին, ուստի և Նորին Մեծութիւնն հաճեցաւ հաստատել զհրովարտակ հաստատութեան առ մեզ, որով պարտիմք մերովսանն ի կատար ածել զցանկութիւնս և զխնդրուածս Նորին Գերապատուութեան. և տալ նմա աջակցութիւն վասն կրօնական և ազգային գործոց հայազգի ժողովրդեան։

Արդ ամենայն ակնածութեամբ աղերսեմք զՍրբութիւն Ձեր մի՛ մոռանալ և զիս զանձնանուէրս յաղօթս Ձեր ի Ս. Տեղիս. ընկալարուք յինէն զհաւաստիս սրտագին և մտերիմ անձնուիրութեանս։ Հոգւով չափ անձնուէր Ձեզ։

---

Ի վերայ ծրարի Նորին Վեհափառութեան գրեալ է հետևեալ հասցէն հանդերձ կնքով Նախարարին արտաքին գործոց։

Նորին Սրբութեան Մեծին յամենայն Կաթուղիկոսացն (Խալիֆ) Յիսուսի, Սրբազնագունին յամենայն կրօնաւորացն Մեսիայի. Կաթուղիկոսին Կաթուղիկոսաց և Մեծի Հայրապետին ամենայն Հայոց՝ որ ի սփիւռս աշխարհի, Մկրտչի Առաջնոյ։

## ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

### Ի ՆՊԱՍՏ ՈՐԴԵԼՈՑ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ

Նորին Ս. Օծութեան ազգիս Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով արած հրաւիրի ի պատասխան, հետևեալ անձինք և հաստատութիւնք նուէրներ են ուղարկել ի նպաստ սովելոց. ուստի «Արարատ» կը փութայ մեծ գոհունակութեամբ հրատարակել մինչև ցայսօր (մայիս 5) ուղարկուած նուէրների ցուցակը ի լուր համօրէն Հայ ազգի։

| | Ռուբ. | Կպ. |
|---|---|---|
| Տփխիսի Առևտրական բանկը . . | 3000 | — |
| Նոր Նախիջևանցի ազգայինք ձեռամբ Մխիթար վարդապետի . . | 3000 | — |
| Տփխիսի փոխադարձ վարկի ընկերութիւնը . . . . | 1000 | — |
| Մոսկուայից Պ. Եղբարք Ճամհարեանք . . . . . . | 1500 | — |
| Մեծ. Պ. Առաքել Ճատուրեան . | 1000 | — |

| | | |
|---|---|---|
| Արմաւրից ձեռամբ Պ. Յովհաննէս Թորոսեանի . . . . | 1600 | — |
| Ձեռամբ Պ. Յ. Զարըխեանի և Գ. Ալաճալեանի հանգանակուած օտարազգիների մէջ Ռոստովում | 1080 | — |
| Ձեռամբ Պ. Փ. Վարդանեանի Տփխիսում հանգանակուած Ռուսուցիչների և Ռուսուցչուհիների մէջ | 1034 | — |
| Տփխիսից Պ. Մ. և Գ. Փրիդոնեան . | 500 | — |
| Շուշուց Պ. Թադէոս Բաբայեան Թամիրեանց . . . . . | 500 | — |
| Պ. Գէորգ Քանանեան վերատեսուչ Լազարեան ճեմարանի . . . | 200 | — |
| Մոզդոկի ազգայինք ձեռամբ Պ. Ս. Գեանջումեանի . . . . . | 200 | — |
| Պեատիգորսկից Պ. և Տիկին Դ. Սվէշնիկեան . . . . . . | 200 | — |
| Եկատերինոդարից Պ Մ. Շահբազ Մ. Մինասեան . . . . . . | 120 | — |
| Մոզդոկեցի Պ. Յովհաննէս Գեանջումեան . . . . . . . . | 100 | — |
| Կուսանք մենաստանին Տփխեաց ձեռամբ Պ. Փ. Վարդանեանի . . | 200 | — |
| Վլադիկաւկազի հայ երիտասարդութիւնը . . . . . . . . | 243 | — |
| Եկատերինոդարի հայ կանայք . . | 130 | 15 |
| Եւպատորիայի հայ հասարակութիւնը | 100 | — |
| Տփխիսից Աղէքսանդր Արամակլիսեանց . . . . . . . . | 100 | — |
| Տփխիսի եկեղեցիներում գոյացած ձեռամբ Առաջնորդին . . . . | 845 | — |
| Եւպատորիայից Յակոբ Սեֆերեան . | 100 | — |
| Աստրախանից Կատարինէ Ջանումեան | 100 | — |
| Հին Նախիջեւանից Վարդան և Սիմօն Փօղոսեան . . . . . . | 100 | — |
| Նուխուց Յովհաննէս Բունեաթեանց | 100 | — |
| Նոր Նախիջեւանից Յարութիւն Խօջայեան . . . . . . . . | 60 | — |
| Փոթիում հանգանակուած ձեռամբ Ա. Թիւրքեանի . . - . | 49 | 50 |
| Սալիանում հանգանակուած ձեռամբ բժ. Պ. Մ. Արամեանի . . . | 52 | — |
| Տփխիսից Պ. Միքայէլ Ղուլիջանեան | 45 | — |
| Եկատերինոդարից Պ. Կարապետ Մ. Թամազեան . . . . . . | 25 | — |
| Ղուբայից Պ. Աւագ Ասրիեան Տ. Եղիազարեան . . . . . . . | 25 | — |
| Սեւաստոպոլից Հայ պանդուխտք . | 32 | — |
| Շուշուց Պ. Մ. Գեանջեցեան և Մ. Դանիէլեան . . . . . . | 50 | — |
| Եկատերինոդարից ձեռամբ Պ. Ա. Քաբիկեանի . . . . . . . | 15 | — |
| Նոր Նախիջեւանից Ուսուցիչք տեղւոյն | 40 | 30 |
| Տփխիսի քաղաքային վարկի ընկերութիւնը . . . . . . . . | 1000 | — |
| Ընդհանուր գումար . | 16945 | 95 |

Այս ամէն նուիրատու անձանց և հաստատութեանց Նորին Վեհափառութիւնը բարեհաճած է իւր գոհունակութիւնը յայտնել մասնաւոր Օրհնութեան կոնդակներով և կամ իւր դիւանից շնորհակալութեան գրերով։

Բաց ի վերոյիշեալ նուիրատուաց՝ նուիրած են նա և հետեւեալ բարեսէր անձինք, որոց նոյնպէս առանձին շնորհակալութիւն յայտնուած է.

| | | |
|---|---|---|
| Տփխիսից վաճառական Պ. Գէորգ Յակոբեան ցորեան . . . . | 100 | փութ |
| Մոսկուայից Պ. Էմմանուէլ Գալըստեան Ոսկերչեանց դուրպա . | 302 | զոյգ |

---

## ԵՐԵՒԱՆՈՒՄ ԳԱՂԹԱԿԱՆԱՑ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ ՀԱՆԴԵՐՁԵՂԷՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ.

Ըստ հրաւիրի և յորդորման Բարձր. փոխ. Թեմակալին Երեւանայ Կիւրեղ վարդապետի Սրապեան, Երեւան քաղաքի վաճառականներն գաղթականաց համար հետեւեալ հանդերձեղէններն նուիրած են.

գորս Արարատը շնորհակալութեամբ կը հրատարակէ.

| | | |
|---|---|---|
| Ամերիկեաններ . . . . | 197 ½ | արշին մահուդ. |
| Զաքար Գէորգեան . . . | 182 | » » |
| Բ. Եղիազարեան . . . | 128 | » » |
| Գրիգոր Ամիրեանց . . | 124 | » չիթ. |
| Եղիազարեանց և Բաբայեանց | 63 ½ | » միտկալ (20 վերշ.) |
| Ադամ Եղիազարեանց . . | 11 | » տրիկօ |
| Արշակ Գէորգեան . . . | 30 ½ | » բամբազիա. |
| Եղիազարեանց և Շահմուրատեան . . . . | 32 ½ | » » |
| Ստեփան Ղարիբեանց . . | 40 ½ | » քիսէի |
| Գէորգ Անտոնեան . . . | 20 | » քիշմիրի բամ. |
| Աղաջան Արշակունի . . | 20 | » տրիկօ |
| Նոյն . . . . | 30 | » մանուսա |
| Գէորգ Գիւզալեանց . . | 10 | » միտկալ |
| Ալէքսան Աբրահամեանց . | 20 | » մանուսա |
| Բաբայեանց և Գալուստեան . | 64 | » բարուչին |
| Յովսէփ Մելիք Աւետեան . | 24 | » պակրօմի |
| Աստուածատուր Աստուածատուրեան . . . | 15 | » միտկալ |
| Աբրահամ Խաչատրեան . | 15 | » տրիկօ |
| Երեմիա Սանոյեանց . . | 6 | » գիւլի չիթ |
| Երեմիա Աւագեան . . | 10 | » բամազա |
| Ղազար Մելիքեան . . | 8 ½ | » չիթ |
| Գրիգոր և Մկրտիչ Յովհաննիսեան . . . | 20 | » » |
| Բագարատ Խաչատրեան . | 15 | » զանազան կտոր |
| Երեմիա Տէր Մովսիսեան . | 12 | հատ ազլուխ |
| Գեղեօն Ահարոնեան : | 5 | թոփ չիլա և խամ չ |
| Արշակ Ասլանեան . . | 5 | » » » » |
| Գէորգ Խանազադեան . | 100 | արշին չիթ. չիլէի, քաթան |
| Գասպար Գասպարեան . | 58 | » միտկալ և 12 ազլուխ |
| Վահան Պօղոսեան . . | 31 ½ | » չիթ և բամազա |
| Պօղոս Յ. Պօղոսեան . . | 10 | » » |
| Վասիլ Այօլեան . . | 46 | » » № 6 |
| Նոյն . . . | 40 | » » 18 կտոր թել |
| Ստեփան Սողոմոնեան . | 9 | մատօկ » |
| Գէորգ . . | 1 | փութ 18 մսխալ » |

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

### ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՑ

Սարգիս Արքեպիսկոպոս Հասան Ջալալեանցի կտակի 1893 թուի հաշիւը.

*Թղթերով Ռուսաց դրամով.*

| ՄՈՒՏՔ. | Ր. | Ր | Կ. |
|---|---|---|---|
| Մնացել էր 31 Յունուարի 1893 ամի. . . | 53·900 | 209 | 10 |
| 1893 թուի ընթացքում ₀/⁰ արժեթղթեր են գնուած. . . . | 3·000 | — | — |
| Տոկոս է ստացուած . | | 2458 | 10 |
| | 56·900 | 3·167 | 29 |

| ԾԱԽՔ. | | | |
|---|---|---|---|
| Դրամագլխի վերայ աւելացնելու համար ⁰/₀ արժէթղթեր գնելու համար ծախսուած է 3·023 ր. 62 կ., լրագիրներում դրամագլխի 1892 թուի հաշիւը տպագրելու համար 26 ռուբլի 64 կոպէկ. | — | 3·050 | 26 |
| | — | 3·050 | 26 |

| | | | |
|---|---|---|---|
| 31 Յունուարի 1894 թ. պատրաստ կայ. տոկոսաբեր թղթերով. | 56·900 | — | — |
| Առձեռն դրամով . | — | 117 | 3 |

Յանձնարարելի. Սկզբնական կտակուած գումարը 6 ½ % 25·000 րուբլիանոց արժեթղթերը պահւում է Թիֆլիսի Արքունական Դրամարանի բաժանմունքում, իսկ մնացեալ գումարները — Մոսկուայի Նոյհանգստեան գանձարանում։ Արքեպիսկոպոս Ջալալեանցի դրամագլուխը պիտի աճէ 1883 թուից սկսած՝ 125 տարուայ ընթացքում մինչև 12 միլիոնաչափ դրամագլուխ հասնելը, իսկ այնուհետև պիտի յատկացուի ուսումնարանների շինութեան և զաւարերայքին անտառաւն թոշակներ կազմելուն։

ԳԷՈՐԳ ՔԱՆԱՆԵԱՆՑ